# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 45-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 44-Ա

### ԱՐՄԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արմեն Վաչագանի Անտոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 43-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Այգեստան թաղամաս 7/3 հասցեում գտնվող 54,96 քմ ընդհանուր մակերեսով շինությունը (բջջային կայան) և նրա համար սահմանված կարգով առանձնացված էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության, «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակության 0.01548 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0153-0007, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N09022024-09-0043 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի սահմանված գներով, օտարել ինքնակամ կառույցն իրականացրած «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությանը՝

1)Շինության համար՝ 20 000 դրամ x 0,1209 x 54,96 քմ = 132 893 (մեկ հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր իննսուներեք ) ՀՀ դրամ,

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողամասի համար՝ 1221 դրամ x 154,8 քմ = 189 011 (մեկ հարյուր ութսունինը հազար տասնմեկ) ՀՀ դրամ:

3)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1-րդ կետի՝ վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 38 000 (երեսունութ հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 | Դեմ -0 | Ձեռնպահ -3

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 42-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԴԱՎԻԹ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաքի Վերելքի փողոցի 31 հասցեում գտնվող 59,25 քմ ընդհանուր մակերեսով շինությունը (ավտոտնակ և օժանդակ շինություն) և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00236 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0026-0018, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28032024-09-0019 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի սահմանված գներով, օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Դավիթ Ռազմիկի Դավթյանին՝

1)Շինության համար՝ 10 000 դրամ x 0,1422 x 59,25 քմ = 84 253 (ութսունչորս հազար երկու հարյուր հիսուներեք ) ՀՀ դրամ,

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողամասի համար՝ 1877,7 դրամ x 23,6 քմ = 44 314 (քառասունչորս հազար երեք հարյուր տասնչորս) ՀՀ դրամ:

3)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1-րդ կետի՝ վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՁԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 41-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Արմեն Համլետի Ադամյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Ե. Չարենցի փողոց 23/35 հասցեում գտնվող 8,8 քմ ընդհանուր մակերեսով շինությունը (մառան) և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00088 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0046-0068, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N02042024-09-0029 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի սահմանված գներով, օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Արմեն Համլետի Ադամյանին՝

1)Շինության համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 8,8 քմ = 10 639 (տասը հազար վեց հարյուր երեսունինը) ՀՀ դրամ

2)Պահպանման և սպասարկման համար ամրակցված հողամասի համար՝ 1221 դրամ x 8,8 քմ = 10 745 (տասը հազար յոթ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ

3)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1-րդ կետի՝ վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 40-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՌՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,11844 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$–րդ հոդվածի 9-րդ մասով, Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 6 որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0007-0002-ից) 0,11844 հեկտար հողամասը (հատված՝ ԱԲ-3) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների կատարումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 39-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՇԵՆՔԻ ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Ագարակ, Չարենցի փողոց շենք թիվ 21, բնակարան 5 հասցեում գտնվող գույքը՝ 64,0 ք.մ. մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N1424567) անհատույց (նվիրատվության կարգով) որպես սեփականություն օտարել Արմո Ենոքի Պողոսյանին:

2. Առաջարկել նվիրառուին՝ ապահովել սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ գործառույթների և դրանց հետ կապված ծախսերի կատարումը:

3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 38-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 610-612-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 5/8 հասցեի 1-ին հարկում գտնվող 7.8 քմ մակերեսով համայնքի սեփականություն հանդիսացող թիվ 3 հասարակական նշանակության տարածքը 3 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել «Սիգմա Սերվիզիս» ՍՊԸ-ին՝ սահմանելով ամսական 17 000 (տասնյոթ հազար) ՀՀ դրամ վարձավճար, որպես գրասենյակ օգտագործելու նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 37-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 14 մարտի 1997 թվականի թիվ 51, 17 մայիսի 2018 թվականի թիվ 572–Ա որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող ներտնտեսային ոռոգման ցանցերը և պոմպը՝ համաձայն հավելվածի, անհատույց շահագործման իրավունքով, 2 (երկու) տարի ժամանակահատվածով տրամադրել «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 36-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և $48^{1}$-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 46.2-րդ կետի թ) ենթակետի, 2003թ. դեկտեմբերի 24-ի N1746-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2017 թվականի մարտի 17-ին տրված օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/290 թույլտվության փոփոխությունը, «Մեղրու ՃՇՇԶ» սահմանափակ պատասխանատվության ընկերության գրավոր հայտը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղի 6-րդ փողոցի թիվ 4/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N07032019-09-0014 վկայական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 1.40061 հա հողամասը կառուցապատման իրավունքով, 32 տարի 5 ամիս ժամկետով, տարեկան մեկ հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր հիսունվեց (173 956) ՀՀ դրամ վճարով տրամադրել «Մեղրու ՃՇՇԶ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը՝ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՐՏԵՐԱՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ՊՐՈ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 28-ի և մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման երկրաբանական ուսումնասիրության 2024-2026 թթ. աշխատանքների» ծրագրի հանրային քննարկման արձանագրությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ նախնական համաձայնություն «Պրո Կոնստրակտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության համար:
2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ -8 | Դեմ -0 | Ձեռնպահ -3

ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 34-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «Մեղրիի մարզամշակույթային կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենի N6024 զեկուցագիրը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել վճարումներ՝ համաձայն N1, N2 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի Ν 33-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳՈՅԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Զիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով Նաիրա Գարեգինի Շահինյանին 01.02.2008 թվականի թիվ 58 պայմանագրով՝ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի վարձավճարի գոյացած պարտավորությունները՝ 685123 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 32-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 22-ի N260-Ա և 2024 թվականի ապրիլի 04-ի N338-Ա որոշումները՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ՁԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի  N 31-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը, համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Բ. ԶԱՔԱՐՅԱՆ**

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 30-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվականի N 29-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին.
2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին.
3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N11-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի վարձավճարի գոյացած պարտավորությունները զիջելու մասին.
5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար վճարելու մասին.
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության համար «Պրո Կոնստրակտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախնական համաձայնություն տալու մասին.
7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը անհատույց շահագործման իրավունքով տրամադրելու մասին.

9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող՝ անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենցի փողոց թիվ 21 շենքի թիվ 5 բնակարանը անհատույց (նվիրատվության կարգով) օտարելու մասին.
11)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,11844 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
12)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արմեն Համլետի Ադամյանին օտարելու մասին.
13)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Դավիթ Ռազմիկի Դավթյանին օտարելու մասին.
14)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությանը օտարելու մասին.
15)Արմեն Վաչագանի Անտոնյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին.
16)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՆԱ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

2024 թվականի մայիսի 15
ք. Մեղրի